DOI: 10.54503/2953-805X-2026.8-29

Տորք Դալալյան, *բ.գ.թ.*
ՀԱԻ

ԿԱՅԾԱԿՆԱՀԱՐ ՄԱՀԱՑԱԾԻ ՇՈՒՐՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՊԱՐԸ ՕՍԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ*

Հիմնաբառեր՝ *կայծակնահար, ծես, ցոփփայ, Եղիա, ցոփ, հավատալիք, հեթանոսություն:*

Նախքան Հյուսիսային Կովկասի գրավումը՝ Ռուսական կայսրությունը մանրազնին հետազոտում էր Կովկասյան մեծ լեռնաշղթայի անցուղիները, մասնավորապես՝ ապագա Ռազմավիրական ճանապարհի տեղանքը: Այս աշխատանքում ներգրավվում էին ռազմական մասնագետներ, որոնցից էր ռուսական բանակի սպա, ծագումով Պրուսիայից Լեոնտի Լեոնտևիչ Շտյոդերը: Վերջինիս թողած օրագիրն ուշագրավ տեղեկություններ է պարունակում օսական համայնքների մասին, որոնցում Շտյոդերը եղել է 1781-ին[1]:

Սույն հաղորդման համար կարևոր է օրագրի այն հատվածը, որտեղ մանրամասնորեն նկարագրվում է օսական «ցոփփայ» կոչվող ծեսը, որ կատարվում էր կայծակից մահացածի շուրջ[2]. *«Նախալեռներում հաճախակի դիպվող ամպրոպը դաշտերում աշխատող կանանց քշել էր դեպի գյուղ և իմ վրանից 50 քայլի վրա սպանել երիտասարդ կնոջը: Կայծակնահարումից հետո՝ նրա հետ եղողները ցնծության աղաղակ արձակեցին, սկսեցին երգել ու պարել մահացածի շուրջ»*: Այնուհետև, ըստ ականատեսի, գյուղի բոլոր բնակիչները հավաքվեցին պարողների շուրջը՝ անտեսելով այն հանգամանքը, որ ամպրոպը շարունակում էր մոլեգնել[3]: Նրանց միակ և պարզունակ կրկներգը հետևյալն էր՝ «Ո՜վ, Եղիա, Եղիա, տիրակալի ցոփփայ»:

---

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21AG-6A080 ծածկագրով «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գիտական նախագծի շրջանակում:

1 Штедер 2016, 5–6.

2 Штедер 2016, 91.

3 Ըստ Հյուսիսային Օսիայի ժողովրդական նկարիչ Մ. Թուղանովի՝ այս ծեսի ժամանակ երգելով, նվագարաններով հավաքվում էր ամբողջ չափահաս բնակչությունը՝ պատանիներից մինչև տարեցներ, կին թե տղամարդ՝ չնայած տեղատարափին կամ անձրևին [Туганов 1977, 70]:

Ռուսական սպայի հաղորդմամբ՝ օսերեն այս երգվող աղոթք-բացականչությունը հնչում էր այսպես՝ *«О Елай! Елдæр чоней. фаллæр, чьрнæ ныр ис куыдæр ныхъхъæр кæнын, цæмæй ныр дæр нæ зонæм, цæмæй ныр дæр нæ зонæм, цæмæй ныр дæр нæ зонæм»*[4]: Իրականում, սակայն, այս կապակցությունը դյուրությամբ բացատրվում է օսերեն. այդ լեզվի խորագետ ուսումնասիրող Վ. Աբաևը Լ. Շտյոդերի մեջբերած բացականչական երգվող արտահայտությունը, փոքրինչ սրբագրելով, մեկնաբանում է այսպես՝ «O, Elia, Elia! ældari coppay» (Ո՛վ, Եղիա՛, Եղիա՛, տիրակալի ցոփփայ)[5]: Մեկ այլ տարբերակի համաձայն՝ կրկներգը եղել է այսպիսին. «Oy alay, Oy alay! Alay coppay besten xuarzey», որ թարգմանվում է «ցոփփայը բարիք բերի ամենքին»[6]: Արդի օսերենի բաղաձայնական համակարգում սուլական և միաֆոկուս պայթաշփական հնչյուններն արտասանվում են որպես շչական և երկֆոկուս պայթաշփական, ուստի coppay (ցոփփայ) բառը, որն այդպես է գրվում ըստ պատմական՝ ալանական արտասանության, նոր ժամանակներում հնչում է čoppay (չոփփայ) տարբերակով:

Օսական *Էլիա*ն նույն ինքը քրիստոնեական սուրբ Եղիան է, որը հայկական և այլ ավանդույթներում նույնպես համարվել է ամպրոպի ու անձրևի տիրակալ: Ըստ հայ ժողովրդական հավատալիքների՝ *«Երբ Եղիա մարգարէն թափով մը կը քշէ իր կառքն, որ ձեռք բերէ իր փախչող պարտապանն ու փոխ-դրամն, կառքի ձայնէն որոտում կ’ըլլայ ու ցոլքերէն՝ կայծակ»*[7]: Կայծակը համարվում էր Ենոք-Եղիայի գավազանի կրակը, և պատկերացնում էին, թե Ենոք-Եղիան, ամպերի վրա վազելով, գավազանով զարկում է ամպերին և գոռում երկնքից[8]: Զավախքում գրանցված հավատալիքի համաձայն՝ *«երկնքի վրայով քառաձի կառքը նստած ճեմում է Եղիա մարգարէն, որի կառքի անիւներից յառաջանում է (ամպի) գոռոց և մէրրակի զարկից՝ կայծակ»*[9]: Ամպրոպային վիշապին և նրա կողմից արգելափակված կամ հափշտակված անձրևաբեր ամպերը, ըստ Մ. Աբեղյանի, նոր ժամանակներում քրիստոնեության ազդեցությամբ փոխարինվել են պարտապանով և փոխ տված դրամով[10]: Հայ ժողովրդական առածի համաձայն՝ *«Քանի Եղեակ չէր իկե, անձրև չէր իկե»*[11], այսինքն՝ «մինչև Եղիան չգա, անձրև չի գա». այստեղ, փաստորեն, ամպի գոռոցին, այսինքն՝ ամպրոպին, փոխարինում է Եղեակը՝ Սուրբ Եղիան, որով նշված առածը նույնանում է «Մինչև ամպը չգոռա՝ անձրև չի գա» հայտնի առածին:

4 Штедер 2016, 91.

5 Абаев 1958, 314.

6 Туганов 1977, 70.

7 Տուտուխեան 1888, 371:

8 Նաւասարդեանց (կազմ.) 1891, 34: «*Կէծակը Ենոք-Եղիայի գաւազանի կրակն ա. ըրանք երկնքումն ան: Ենոք-Եղիէն ելնում ան ամպի վրէն, ամպի վրէն վազում ան, գաւազանը տալիս ամպին՝ պտրտում ա, գոռում ա*»:

9 Լալայեան 1895, 349:

10 Abeghian 1899, 82–83; տե՛ս նաև Աբեղյան 1975, 69–70:

11 Շերենց 1885, 138:

Օսերի մեջ Եղիան արևմտյան՝ դիգորական բարբառում կոչվում է Էլիա կամ Ուացէլիա/Ուացէլա, իսկ խոսողների քանակով առավել մեծաթիվ իրոնական բարբառում՝ Ուացիլլա, որոնք բառացիորեն նշանակում են «Սուրբ Իլյա»[12]: Արդեն 18-րդ դարում, իսկ գուցե և ավելի վաղ, վերջինիս անունը հայտնի էր Ուաչիլլա ինչողությամբ: Այսպես, վրաց հեղինակ Վախուշտի Բագրատիոնին 18-րդ դարի առաջին կեսին գրում է, որ թե՛ մուսուլման, թե՛ քրիստոնյա օսերը երկրպագում են Վաչելա կոչվող մի կուռքի, որ Իլյան է[13]:

Ուացիլլան օսական հավատալիքներում ամպրոպի շանթառաք աստվածն է, բերքի և հացազգիների հովանավորը, ում ձոնված են եղել բազմաթիվ ժողովրդական սրբավայրեր: Դիցաբանական պատկերացումներում Ուացիլլան երթևեկում է երկնքով և կայծակ-նետերով հարվածում չար ոգիներին: Նարթյան էպոսում, սակայն, դիվականացված «Վացիլլաների» դեմ կռվում է ամպրոպային հերոս Բաթրաձը[14]: Օսական ժողովրդական աղոթքում ասվում է՝ *«առաջին բերքից քեզ ենք աղոթում,/Լավագույն նախիրով էլ քեզ ենք աղոթում»*[15]: Բացի այս աղոթքից, մյուս բանաձևային հնագույն նմուշը, որ կապված է Ուացիլլայի հետ, *ցուփ-փայ* ծեսի՝ վերը հիշատակված կրկներգն է:

Շարունակելով ծեսի նկարագրությունը՝ պրուսացի ուղեգիր Լ. Շտյոդերը նշում է, որ կայծակնահար մահացածի մոտ հավաքվածները, շուրջպար կազմած, պտտվելով, որոշակի հաճախականությամբ արտաբերում էին այս կրկներգը՝ անդադար պարելով մինչև գիշեր[16]: Մահացած կնոջը նոր զգեստներ էին հագցրել, դրել նրան նույն տեղում և նույն դիրքով, որ կայծակնահար լինելուց ընկել էր[17]: *«Նրա ծնողները, քույրը և ամուսինը պարում էին, երգում և այնքան գոհ էին երևում, որ կարծես դա ինչ-որ տոնախմբություն լիներ. իրենց սգավոր դեմքերը կգնահատվեին իբրև պատժելի մեղք՝ Էլիայի դեմ»*[18]: Ութ օր տևած այս տոնախմբությունն ընթանում էր Կովկասում հայտնի «լեռնային բժիշկ» Գենշեկի «քավորությամբ», ով իր շնորհը ստացել էր տարեց կանանցից և հոչակված էր խոտաբուժությամբ: Նա էլ հենց բազմաթիվ նվերների դիմաց Շտյոդերին տեղեկացրել էր այդ իրադարձության մասին: Վերջինիս օրագրից, սակայն, հստակ չի հասկացվում, թե ո՛ր պահից սկսած է ինքը մասնակից դարձել այդ ութօրյա տոնախմբությանը:

12 Абаев 1989, 31.

13 Вахушти 1904, 141.

14 Калоев 1992, 543–544; Дзадзиев et al. 1994, 151–152.

15 Тменаты et al. 2000, 358.

16 Ըստ Վ. Աբաևի թարգմանության՝ *«…կրկնում էին այդ բառերը մե՛րթ մեկ, մե՛րթ այլ կարգով, ընդ որում մեկը մեներգում էր, իսկ երգչախումբը՝ կրկնում»* [Абаев 1958, 314]:

17 Ըստ Մ. Թուղանովի՝ կայծակնահար մահացածի շուրջը դաշույնով գետնին շրջան էին գծում, որից ներս արգելված էր ոտք դնել: Բացի այդ, Թուղանովի դաշտային նյութերի համաձայն՝ պարում էին ոչ թե անդադար, այլ 3 անգամ էին պտտվում դիակի շուրջ [Туганов 1977, 69]:

18 Штедер 2016, 91–92.

Ինչպես շարունակում է պատմել Շտյոդերը՝ բուժակ Գենշեկի կարգադրությամբ՝ կայծակնահար կնոջ դիակի մոտ *«բերել փվեցին նաև ինչ-որ ժամանակ կայծակի հարված ստացած մի պատրանու։ Այնտեղ հավատում են, որ բոլոր նրանք, ովքեր ժամանակին կայծակի հարված են ստացել, բայց ողջ մնացել, դառնում էին Էլիայի սպասավորներ և նրա կամքի նախազուշակներ։ Նույնիսկ կայծակի հարված ստացած անասուններին էր ազատություն շնորհվում»*[19]:

«Նախազուշակ» երիտասարդը մոտենալով կայծակնահար ընկած կնոջը՝ նախ բարևեց, ինչպես՝ բարեկամի հետ, նրան անվանելով իր նման երջանիկ մեկը, որին բախտ է վիճակվել Էլիայի հարվածին արժանանալու: Այնուհետև պատանին *«երգում և պարում էր շրջանի մեջ, ջղաձգվում, ապա ընկավ կնոջ մոտ, փակեց իր աչքերը և մինչև լիովին ուժասպառ լինելը շարունակում էր ջղակծկումներով գալարվել, որի ընթացքում չորս ուժեղ տղամարդ հազիվ էին կարողանում զսպել նրան։ Երգչախումբը վերսկսում էր երգ ու պարը, երբ ջղացնցումները դադարում էին, բայց հենց որ ուժեղանում էին՝ բոլորը կանգ էին առնում և երկյուղածորեն ու ակնածանքով նայում էին տառապյալին»*[20]: Պատանին փակ աչքերով և կայտառ ձայնով պատմում էր, թե ինչ է ինքը իբր տեսնում Էլիայի մոտ, տալիս էր իբր նրա կողքին գտնվող՝ բոլոր մահացածների անունները: Ժամերով ջղաձգվելով ու մարգարեանալով՝ նա ինքնամոռաց հաղորդում էր Էլյայի հրահանգները, որոնք վերաբերում էին մահացած կնոջը:

Ամենանշանակալից կարգադրությունն այն էր, որ պետք էր 8 օր շարունակ ցնծալ մահացածի դիակի մոտ[21] և ձեռնպահ մնալ ամեն տեսակի աշխատանքներից: Պետք էր նվերներ հավաքել, մահացած կնոջը դնել դագաղի մեջ և 8 օրով այն թողնել փայտամած բեմահարթակի վրա՝ հրաժեշտ տալու համար: Ութերորդ օրը նրան պետք է դնեին նոր սարքած սայլի վրա, որը պետք է լծված լիներ սպիտակ պուտեր ունեցող սև ցլերով[22]: Ցլերն ընտրվում էին ժլատ մեկի ունեցվածքից, այնուհետև պիտի սպանվեին: Այս կատակն, ըստ Շտյոդերի, բուժակն արել էր այն բանի համար, որ այդ ժլատ մարդը ժամանակին բուժման դիմաց չէր վճարել իրեն: Երիտասարդները, մահացած կնոջ ազգականների հետ միասին, թափորով անցնում էին հարևան գյուղերով և նվերներ հավաքում՝ անասունների և այլ բնամթերքի տեսքով: Նվերները կամ մահացածի հետ էին դրվում, կամ գնում էին տոնախմբության վրա, կամ էլ տրվում էին հարազատներին. վերջինների թվում էին բուժակն ու նախագուշակ երիտասարդը: Շտյոդերի

[19] Штедер 2016, 92.

[20] Штедер 2016, 92.

[21] Ըստ Վ. Աբաևի թարգմանության՝ պետք էր «8 օր շարունակ խարույկը վառ պահել մահացածի դիակի մոտ» [Абаев 1958, 315]:

[22] Ըստ Մ. Թուղանովի՝ երիտասարդ ցլիկները (արջառները) պետք է երբեք լուծ տեսած չլինեին [Туганов 1977, 69]:

մի քանի նվերի դիմաց բուժակը բացահայտեց իր «հնարքը», այն է՝ ինքն այնպես էր կապկպել այդ երիտասարդի թևը, որ արյան շրջանառությունը կանգ էր առել, և դրանից էին առաջանում ջղաձգումները[23]:

Դագաղն, ի վերջո, դրվեց սայլի վրա, ցլերին թողեցին ինքնակամ ընտրել իրենց ճանապարհը, և մահացածը պետք է թաղվեր այնտեղ, ուր կանգ կառնեին ցլերը: Այդ անգամին ցլերը կանգ առան մոտակա մարգագետնում: Իսկույն քարերով քառանկյունի շարեցին[24]՝ մի քանի ֆուտ բարձրություն ունեցող թմբի վրա, դագաղը դրեցին մեջը, և դագաղի շուրջն ու վրան ծածկեցին մեկ սաժեն բարձրության քարակույտով: Դրա կողքին մի ձող տնկեցին, որի վրա քաշեցին այծի մորթի և գլուխ[25]: Կողքին ավելի կարճ ձողից կախեցին մահացածի լավագույն զգեստները և գերեզմանի մոտ հաց կերան հավաքված սննդամթերքով[26]: Մահացածի անասունները ազատ արձակվեցին տափաստանում և հեռացան: Նրանց վրա հատուկ նշաններ էին կապում, որպեսզի եթե մոտենային հովիվներին, սրանք նորից հեռու քշեին այդ անասուններին[27]:

Այսպիսով, *ցուփփայ* անունով կոչվում էր թե՛ ծեսը, թե՛ պարը: Օսական ժողովրդական պարերին հատուկ աշխատանք նվիրած Մահարբեկ Թուղանովն այս պարը համարում է օսերի ամենահին պարը[28]: Սակայն հյուսիսկովկասյան այլ ժողովուրդների մեջ ևս՝ չերքեզներ, աբազիներ, աբխազներ, բալկարներ և կարաչայներ, արձանագրված են նման պարեր և ծեսեր, որոնք կոչվել են *չատփար*, *չուփփա* և այլ նման անուններով: Դրանք բոլորն էլ կապված են եղել ամպրոպային աստվածության պաշտամունքին, որն աբխազների մեջ կոչվում էր Աֆը, չերքեզների մեջ՝ Շըբլէ, իսկ օսերի մեջ՝ Ուացիլլա[29]: Փաստորեն, եթե մյուս հյուսիսկովկասյան ժողովուրդները հիմնականում պահել էին համապատասխան հեթանոսական աստծո անվանումը, ապա օսերն այն փոխարինել էին քրիստոնեական սրբի անվամբ, որն իր վրա էր վերցրել հնագույն ամպրոպային գործառույթներ, ինչպես և սուրբ Եղիան՝ հայերի մեջ:

---

23 Штедер 2016, 92–93.

24 Կեսմետրանոց բարձրության այս չափարը որոշ տեղերում շարվում էր ոչ թե քարերով, այլ՝ հյուսվում ճյուղերով: Այդ պահից սկսած՝ ցանկապատված այդ տարածքը հանգուցյալի տոհմի համար վերածվում էր սրբավայրի: Դրա շուրջ ծառեր էին տնկում, և այն շուտով վերածվում էր սրբազան պուրակի: Ամեն տարի նույն օրը հանգուցյալի հարազատներն այդտեղ ցլեր և ոչխարներ էին զոհաբերում ու խնջույք կազմակերպում՝ ցույց տալով իրենց ուրախությունը՝ կայծակնահար մահացածի կապակցությամբ [Туганов 1977, 69–70]:

25 Առհասարակ, օսերը Ուացիլլայի պատվին այծ էին մորթում, միսն՝ ուտում, իսկ մորթին քաշում-հագցնում էին բարձր ծառի վրա և երկրպագում էին այդ մորթուն Ուացիլլայի տոնի օրը, որպեսզի վերջինս մարդկանց ազատեր կարկտից և առատ բերք պարգևեր [Вахушти 1904, 141]:

26 Իրականում սա ոչ թե սգացող հոգեհաց էր (*хицт*), այլ՝ ցնծացող խնջույք (*куывд*) [Туганов 1977, 70]:

27 Штедер 2016, 93.

28 Туганов 1977, 69.

29 Абаев 1958, 315.

Լեզվաբանորեն *ցուփփայ*, *չաուփար*, *չուփփա* բառերը ստուգաբանված չեն, առ այսօր դրանց ծագման վերաբերյալ չկա համընդհանուր ընդունված բացատրություն: Համեմատական լեզվաբան Վ. Աբաևը *ցուփփայ* բառի վերջավորությունը՝ *-այ*, համարում է կոչական վերջածանց, ինչպես որ օսական *օնայ* բառում, որը նույնպես ծիսական կրկներգի անվանում է[30]: Ըստ այդմ, *ցուփփայ* ծիսական եզրույթի արմատը պետք է լիներ **ցուփ–*:

Թվում է, այս արմատը ծագումնաբանորեն կապված է հայերեն *ցուփ* բառի հետ, որի իմաստներն են՝ «մեղկ, թեթևաբարո, լիրբ»: Այդուհանդերձ, դժվար թե հայերենը փոխառյալ լիներ օսերենից, ինչպես որ ենթադրել էինք նախկինում[31]: Առավել հավանական է ընդունել, որ հեթանոսական Հայաստանում նույնպես տարածված են եղել կայծակնահար մահացածների շուրջը կատարվող պարեր, որոնք կարող էին կոչվել նույն եզրույթով: Հետագայում, թերևս, այդ եզրույթը «դիվականացվելով»՝ բացասական երանգ է ձեռք բերել քրիստոնեական շրջանում: Հայ. *ցուփ* արմատն օգտագործել են մեր միջնադարյան հեղինակները՝ բնորոշելու համար հեթանոսական բարքերը: Օրինակ, հեթանոսության դեմ պայքարը և քրիստոնեական կրոնի հաստատումը Մեծ Հայքում նկարագրելով՝ Ագաթանգեղոսը գրում է. *«Նա և ազատակոյտն, խառնաճաղանճ ամբոխիւն հանդերձ, զմիմեամբք դիզանէին ի միմեանց վերայ, առ պակշուր յիմարութեան ցուփութեան բարոյիցն, այլանդակ մտացն զեղխութեան գիճութեանն հեթանոսաբար սովորութեանցն»* [15. 14]:

Հ. Աճառյանը հայ. *ցուփ* բառը համեմատում էր վրաց. ცოფ-ი [ցոփի] բառի հետ, որ նշանակել է «կատաղած, կատաղի», «շնախտ». ըստ Աճառյանի՝ իմաստային բավական մեծ տարբերության պատճառով, սակայն, հայերեն և վրացերեն ձևերը չէին կարող փոխառված լինել միմյանցից, ուստի նա հավանական էր համարում ընդհանուր սկզբնաղբյուրի գոյությունը[32]: Մեր կարծիքով, խնդրո առարկա օսերեն, հայերեն ու վրացերեն, ինչպես և կովկասյան լեզուներում հայտնի այլ ձևերն ունեն ենթաշերտային ծագում և բոլորն անկախաբար ծագում են Հայկական լեռնաշխարհում և Կովկասում նախապատմական ժամանակներում խոսվող ցեղային լեզուներից[33]:

30 Абаев 1973, 228.

31 տես Դալալյան 2002, 164–165:

32 Աճառեան 1979, 464–465:

33 Այս բառերը հայերենում նույնքան բնիկ են, որքան հնդեվրոպական ծագման բառերը. ենթաշերտային բառերի վերաբերյալ առավել մանրամասնորեն տես Դալալյան 2015:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԲԵՂՅԱՆ 1975
Աբեղյան Մ. Խ., Հայ ժողովրդական հավատքը // Երկեր, հ. Է., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 11–102:

ԱՃԱՌՅԱՆ 1979
Աճառյան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, ԵՊՀ հրատ., 1979, 676 էջ:

ԴԱԼԱԼՅԱՆ 2002
Դալալյան Տ. Ս., Հայ-օսական լեզվամշակութային առնչություններ, Ժ. 02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2002, 245 էջ:

ԴԱԼԱԼՅԱՆ 2015
Դալալյան Տ. Ս., Հայերենի ենթաշերտային ծագման որոշ բառերի ստուգաբանություններ // Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով. զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Գիտություն», 2015, էջ 69–78:

ԼԱԼԱՅԵԱՆ 1895
Լալայեան Ե.Ա., Ձաւախք. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար // Ազգագրական հանդէս, գիրք Ա., Շուշի, տպարան Ա. Մահտեսի-Յակոբեանց, 1895, էջ 117–380:

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՑ 1891
Նաւասարդեանց Տ. Ա. (կազմ.), Հայ ժողովրդական հէքիաթներ, գիրք 7, Թիֆլիս, տպարան Մովսէս Վարդանեանի, 1891, 136 էջ:

ՏՈՒՏՈՒԽԵԱՆ 1888
Տուտուխեան Յ. Մ., Հայ գիւղացիների հայեացքը բնութեան երևոյթների վերայ // Հանդէս գրականական և պատմական, գիրք 1, Մոսկուա, Զուլարան և տպարան Օ. Օ. Հերբէկ, 1888, էջ 370–372:

АБАЕВ 1973
Абаев В.И., Историко-этимологический словарь осетинского языка, т. 1, Москва-Ленинград, Изд. АН СССР, 1958, 656 с.; т. 2, Ленинград, «Наука», 1973, 448 с.; т. 4, Ленинград, «Наука», 1989, 324 с.

ВАХУШТИ БАГРАТИОНИ 904
Вахушти Багратиони (Вахушти Царевичъ), Географиія Грузии, (введеніе, переводъ и примечанія М.Г. Джанашвили), Отдельный оттискъ изъ XXIV-ой книжки «Записокъ» Кавказскаго Отдела Императорскаго Русскаго Географическаго Общества, Тифлисъ, Типографія К.П. Козловскаго, 1904, 241 с.

ДЗАДЗИТЫ, ДЗУЦЦАТЫ, ХЪАРАТЫ 1994
Дзадзиты А.Б., Дзуццаты Х.В., Хъараты С.М., Ирон адæмы этнографи æмæ мифологи: цыбыр дзырдуат, Дзæуджихъæу, Этнография и мифология осетин: краткий словарь, Владикавказ, «Терек», 1994, 284 с.

КАЛОЕВ 1992
Калоев Б. А., Уацилла // Мифы народов мира: энциклопедия, т. 2, Москва, Советская Энциклопедия, 1992, 720 с.

ТМЕНАТЫ, БЕСОЛТЫ, ГОНОБОБЛЕВ 2000
Тменаты В., Бесолты Е., Гонобоблев Е., Ирон адæмы динæмбарынад (дины истори – адæмы историйы). Хрестомати, Дзæуджихъæу, 2000, 504 с.

ТУГАНОВ 1977
Туганов М.С., Осетинские народные танцы // Литературное наследие, Орджоникидзе, «Ир», 1977, 240 с.

ABEGHIAN 899
Abeghian M.Kh, Armenische Volksglaube, Leipzig, "Druck von W. Drugulin", 1899, 127 S.

Tork S. Dalalyan, *Ph.D.*
Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

DANCE AROUND THE DEAD STRUCK BY LIGHTNING IN OSSETIAN TRADITION

Keywords: *lightning, ritual, coppai, Elia, loose, belief, paganism.*

In the 19th century, during his arrival in the North Caucasus, Russian army officer Leonti Stöder described in detail an Ossetian ritual called "tsoppay" (coppay), which was performed around a person who was dead from lightning. Stöder was personally present at a ceremony when a woman struck by lightning was surrounded by her companions, they shouted for joy and began to sing and dance around the deceased. All the inhabitants of the village gathered around the circle of dancers, ignoring the fact that the thunder was continuing to rage. Their only and primitive refrain was the following: "O, Elia, Elia! ældari copay".

In Ossetian popular beliefs, Elia is the name of Christian Saint Elijah, who was considered to be the ruler of lightning in many Christian traditions. According to Armenian folk beliefs, Prophet Elijah (Yeghia) is the "bringer of rain", he rides on the clouds with his four-horse chariot, the rumbling of the chariot causes the clouds to thunder, and the sky flashes from the wheels or from the whip hitting the steeds.

As to the dance and ritual both called coppay, it should be noted that similar customs are also recorded among other peoples of the North Caucasus: Circassians, Abazis, Abkhazians, Balkars and Karachais. As we can see, all of them live in the western part of the Caucasus, and the westernmost point is Ossetia or Alania. It is not excluded that the same ritual term could be also widespread in pagan Armenia, and this is where the Classical Armenian ցոփ [c'op'] tsop 'loose', 'lascivious', 'lewd' could come from.

Linguistic analysis shows that, most likely, Arm. ցոփ [c'op'] has originally referred to light-step dance movements, later when Christianity was adopted this term after being demonized acquired a negative tone and became to be used in generalized meaning. The word in its negative meaning is repeatedly used by medieval Armenian authors to describe pagan customs.

Hereby we suggest to observe Os. coppay – Arm. ցոփ [c'op'] as an Armenian-Caucasian lexical isogloss, which has remained unnoticed in the etymological works on both Armenian and Ossetic. It is probably a heritage of common linguistic substratum in Armenian, Georgian, Ossetic, and some Caucasian languages. We analyze these words in anthropological and linguistic perspectives; the components of the ritual – dance, refrain, belief – are also examined in the report.

Торк Самвелович Далалян, *к. ф. н.*
Институт археологии и этнографии НАН РА

ТАНЕЦ ВОКРУГ ПОРАЖЁННОГО МОЛНИЕЙ ПОКОЙНИКА В ОСЕТИНСКОЙ ТРАДИЦИИ

Ключевые слова: *молния, ритуал, цоппай, Элия, развратный, верование, язычество.*

В XIX веке, во время пребывания на Северном Кавказе, офицер русской армии Леонтий Штёдер подробно описал осетинский ритуал под названием “цоппай” (соррау), исполнявшийся вокруг человека, погибшего от удара молнии. Штёдер лично присутствовал на церемонии, во время которой поражённую молнией женщину окружили её спутницы; они радостно восклицали, начинали петь и танцевать вокруг умершей. Вокруг круга танцующих собрались все жители деревни, не обращая внимания на то, что гроза продолжалась. Их единственным и примитивным припевом были слова: “O, Elia, Elia! ældari соррау”.

В осетинских народных верованиях Элия — имя христианского святого Илии, который во многих христианских традициях считался повелителем молнии. Согласно армянским народным представлениям, пророк Илия (Yeghia) является «приносящим дождь»; он мчится по облакам на своей колеснице, запряжённой четвёркой коней, громыхание колесницы вызывает гром, а небо сверкает от колёс или от удара кнута по коням.

Что касается танца и ритуала, оба обозначаемых словом соррау, следует отметить, что сходные обычаи зафиксированы и у других народов Северного Кавказа: черкесов, абазин, абхазов, балкарцев и карачаевцев. Как видно, все они проживают в западной части Кавказа, а крайним западным пунктом является Осетия, или Алания. Не исключено, что тот же ритуальный термин был распространён и в языческой Армении; именно отсюда может происходить классическое армянское слово ցոփ [c‘op‘] — tsop ‘развратный’, ‘легкомысленный’, ‘распущенный’.

Лингвистический анализ показывает, что, вероятнее всего, арм. ցոփ [c‘op‘] первоначально относилось к лёгким танцевальным движениям, однако после принятия христианства этот термин, подвергшись демонизации, приобрёл отрицательную окраску и стал употребляться в более обобщённом значении. Слово в своём негативном значении неоднократно используется средневековыми армянскими авторами при описании языческих обычаев.

Таким образом, мы предлагаем рассматривать осет. соррау и арм. ցոփ [c‘op‘] как армяно-кавказскую лексическую изоглоссу, оставшуюся незамеченной в этимологических исследованиях как армянского, так и осетинского языков. Вероятно, она представляет собой наследие общего языкового субстрата армянского, грузинского, осетинского и некоторых кавказских языков. В докладе данные слова рассматриваются в антропологической и лингвистической перспективах; анализируются также компоненты ритуала — танец, повторяющаяся словесная формула и верование.